ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N

ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Գյումրի «17» 01 2023 թ.

ՀՀ Շիրակի մարզպետարանը, ի դեմս մարզպետարանի գլխավոր քարտուղար Ա.Աբրահամյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Սպառող), մի կողմից, և <<Հայաստանի էլ ցանցեր>> ՓԲԸ <<Ղարս>> մասնաճյուղ <<Գյումրի>> էլ ցանցեր, որը գործում է համաձայն իրեն տրամադրած գործունեության թիվ 0092 լիցենզիայի այսուհետ՝ <<Մատակարար>>, ի դեմս տնօրեն Գ.Ֆարզադյանի մյուս կողմից, հիմք ընդունելով 2018 թվականի մայիսի 5-ին կնքված N: 6120135 էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի այսուհետ՝ պայմանագիր <<Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման>> թիվ ՀՀ ՇՄ ՀՄԱ-ԱՊՁԲ-18/1 պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 42-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Մատակարարը պարտավորվում է Պայմանագրով և սույն Համաձայնագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Սպառողին մատակարարել սույն Համաձայնագրի հավելվածով սահմանված գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Սպառողը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

1.2 Սույն համաձայնագիրը գործում է 2023 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում Ծառայության մատուցման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն համաձայնագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի հավելվածը հանդիսանում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

2.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ Շիրակի մարզպետարան	<<ՀԷՑ>> ՓԲԸ <<ՂԱՐՍ>>Մ/Ճ
ք. Գյումրի Գ. Նժդեհի 16	<<ԳՅՈՒՄՐԻ>> ԷԼ ՑԱՆՑ
ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական	Ք. Գյումրի, Լ.ՄԱԴՈՅԱՆ 43
գանձարչություն	<<Արդշինբանկ>>ՓԲԸ
900211205027	Հ/Հ 2474663153865490
ՀՎՀՀ 05507437	ՀՎՀՀ 01520882
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ